ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Ս. Գայանե եկեղեցում, ձեռամբ Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի, կատարվեց Սարգիս սրկ. Ղանդիլյանի քահանայական ձեռնադրությունը:

Դեկտեմբերի 10-ին, կիրակի օրը, ս. պատարագից ետաջ, կատարվում է նորընծայի ձեռնադրության կարգը: Նորընծան ծնրադիր առաջնորդվում է դեպի Ս. Խորան և ապա ձեռքերը բարձրացրած դառնում դեպի հավատացյալ բազմությունը, հրաժարվում աշխարհից՝ կոչվելու համար «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն սրբոյ եկեղեցւոյ»: Այդ պահին սուրբ եկեղեցու կամարների տակ հնչում է հանդիսավոր ու հաղթական «Աստուածային և երկնային շնորհ, որ լնու զպէտս սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ» շարականը:

Այնուհետև նորընծան մոտենում է ձեռնադրիչ Տ. Ասողիկ եպիսկոպոսին, որն իր ձեռքը դնում է նրա գլխին և հանդիսավոր արտասանում ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան սաղօթս արարէք զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»: Դպրաց դասը միաբերան վկայում է. «Արժանի է»:

«Ողջույն»-ից առաջ նորընծան աղոթքով ու օրհնությամբ ստանում է քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ:

Մոտենում է ձեռնադրության խորհրդավոր պահը: Տ. Ասողիկ սրբազանը մեռոնանիշը ձեռքին մոտենում է նորընծային, օծում սրբալույս մեռոնով նրա ճակատն ու ձեռքերը և վերանվանում Տ. Նորայր քահանա:

Նորընծա տեր հայրը տալիս է իր առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Արարողության ավարտին պատարագիչ սրբազանը և արարողությանը ներկա հոգևորականներն ու հավատացյալները շնորհավորում են նորընծա Տ. Նորայր քահանային, մաղթելով անձնուրաց նվիրում՝ ի սպասավորություն Հայ Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծային, այն հույսով, որ նա պատվով ու նվիրումով կկատարի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևորականի իր կոչումը: